Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2019 թվականի
նոյեմբերի 15-ի թիվ ԿԽ-009/19 որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուսուցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատախազների 2019 թ. լրացուցիչ վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագրերը:

2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից՝ «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 19-րդ հոդվածի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է դատախազների մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործմանը հետևյալ դասընթացների շրջանակներում.

ա) «Չավարտված հանցագործությունների որակման հիմնախնդիրները»,

բ) «Ձերբակալման, կալանավորման և դատարանում մեղադրանքի պաշտպանության հիմնախնդիրները»:

Ուսումնառության ժամաքանակը յուրաքանչյուր դատախազի համար սահմանվում է 6 ակադեմիական ժամ:

4. Դատախազների լրացուցիչ վերապատրաստումն իրականացվում է ծրագրով նախատեսված դասընթացների մոդուլների հիման վրա: Յուրաքանչյուր դատախազ հատուկ մասնագիտական դասընթացների մոդուլում ընդգրկված դասընթացների շրջանակներում վերապատրաստվում է 6 ակադեմիական ժամ:

5. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով: Ուսումնառությունը սկսվում է Ակադեմիայի կառավարման խորհրդի հաստատած ժամանակացույցի հիման վրա:

6. Առկա ուսուցման ձևով լրացուցիչ վերապատրաստման ժամանակացույց է սահմանվում 2019 թվականի նոյեմբեր - դեկտեմբեր ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	P-Q-090-19	Չավարտված հանցագործությունների որակման հիմնախնդիրները	2
2.	P-Q-091-19	Ձերբակալման, կալանավորման և դատարանում մեղադրանքի պաշտպանության հիմնախնդիրները	4

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. P-Q-090-19. Չավարտված հանցագործությունների որակման հիմնախնդիրները

Դասընթացը պայմանավորված է չավարտված հանցագործության որակման հիմնախնդիրների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացը ներառում է՝

Թեմա 1. Հանցագործությունների որակման իմացաբանական հիմունքները:

Թեմա 2. Չավարտված հանցագործությունների և հանցագործությունից կամովին հրաժարման որակման առանձնահատկությունները

Քննարկման առարկա կդարձվեն՝

1) Չավարտված հանցագործությունների որակման առանձնահատկությունները.

- հանցագործության փուլերի հիմնախնդիրը նյութական, ձևական և հատած հանցակազմերում,
- հանցագործության և հանցափորձի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները, դրանց սահմանազատման հիմնախնդիրը,
- որակման գործընթացում հանցագործության կատարման փուլի որոշման հարցերը:

2) Հանցագործությունից կամովին հրաժարումը.

- հանցագործությունից կամովին հրաժարման քրեաիրավական բնութագիրն ու պայմանները,
- հանցագործությունից կամովին հրաժարման հիմնախնդիրները ավարտված և չավարտված հանցափորձերի դեպքում,
- հանցագործությունից հանցակիցների կամովին հրաժարվելու առանձնահատկությունները:

2. P-Q-091-19. Ձերբակալման, կալանավորման և դատարանում մեղադրանքի պաշտպանության հիմնախնդիրները

Դասընթացը պայմանավորված է ձերբակալման, կալանավորման և դատարանում մեղադրանքի պաշտպանության հիմնախնդիրների վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման անհրաժեշտությամբ:

Դասընթացի շրջանակում ուսումնասիրման առարկա կդառնան ազատության սահմանափակման հիմքերը, ազատությունից զրկված անձանց համար նախատեսված երաշխիքները, ձերբակալման իրավաչափության պայմանները, դրանց նկատմամբ դատական վերահսկողության առանձնահատկությունները, կներկայացվեն կալանքի օրինականության վերաբերյալ ՄԻԵԴ նախադեպային իրավունքը և ՀՀ վճռաբեկ դատարանի որոշումները և այլն:

Դասընթացի շրջանակներում քննության առարկա կդառնան նաև դատարանում մեղադրանքի պաշտպանության հիմնախնդիրները: